Հարիւրապետն ազդ առնէ հազարապետին իւրոյ։

Հազարապետն ազդ առնէ զօրագլխին իւրոյ։

Զօրագլուխն ազդ առնէ սպարապետին իւրոյ։

Սպարապետն ազդ առնէ նախարարին իւրոյ։

Նախարարն ազդ առնէ 'ի դրունս տանն հայոց։

## ԳԼՈՒԽ ՅԸ.

Ամենայն կապեալ և բանիւ արարեալ որ ոք զինուոր իշխանէ որ իցէ եթէ սպարապետէ մինչև 'ի պաշտօն հարիւրապետ և իշխան աշխարհի հրամանաւ կապեալ հնազանդին իւրոյ, ոչ ոք կարէ արձակել բայց վճիռն դատաստանին ըստ արժանոյ վարձոյ գործոց ձեռաց կապողաց և կապելոց։

## ԳԼՈՒԽ ՅԹ.

Նախարարն հայոց ունի իշխանութիւն 'ի վերայ ամենայն պաշտօնատարի 'ի կարգէն զինուորութեան բանիւ առնել և կալանաւորել, այլ հանելն պաշտօնէ կալանաւորին պարտ է լիցի վճռաւ դատաստանի, 'ի պատճառէ մեղաց գործոց ձեռաց իւրոց։

## ԳԼՈՒԽ ՅԺ.

Ամենայն պաշտօնատար բանադրեալ եթէ 'ի նախարարէ և եթէ 'ի տանէն հայոց, և եթէ զօր